ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/90

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.06.2019թ. թիվ 26/10184-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.06.2019թ. թիվ ՊՆ/02/870-2019 գրության հիման վրա, 18.06.2019թ. «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.06.2019թ. թիվ ՊՆ/02/870-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ կարիքների համար «Գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 24 մասնակիցներ, այդ թվում՝ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը:

Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը գնահատող հանձնաժողովի կողմից 26-րդ և 33-րդ չափաբաժինների մասով ճանաչվեց 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվեց՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարվեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ուներ 20,334 (քսան հազար երեք հայուր երեսունչորս) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 44-րդ կետը, որոշեց Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի հայտը մերժել բոլոր այն չափաբաժինների մասով, որտեղ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ուներ գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և միաժամանակ հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ առաջարկեց տվյալները չներկայացնել լիազորված մարմին, եթե մասնակցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացնեն մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, սակայն մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կամ կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովին լրացուցիչ տեղեկատվությունը չներկայացվեց Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից 04.06.2019թ (սահմանված ժամկետից մեկ օր ուշացումով) հանձնաժողովին

ներկայացվեց պետական հարկային մարմնի կողմից տրված N1050 տեղեկանքն առ այն, որ 03.06.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, բայց քանի որ վերը նշված տեղեկանքը ներկայացված էր օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ -ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2019թ. թիվ 26/10184-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով 10.04.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 23.04.2019թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն 26-րդ և 33-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 15.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (23.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 20 334 (քսան հազար երեք հայուր երեսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետնանց պարտավորություններ, իսկ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի կամ կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովին լրացուցիչ տեղեկատվությունը չներկայացվեց, («Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի կողմից հարկային մարմնից 04.06.2019թ ներկայացվեց 1050 տեղեկանք առ այն, որ 03.06.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետնանց պարտավորություններ) և քանի որ վերը նշված տեղեկանքը ներկայացված էր օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները 33-րդ չափաբաժնի մասով «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2019թ. թիվ 26/10184-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Տվյալ դեպքում, վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Եթե ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Տվյալ դեպքում մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Այս դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն 26-րդ և 33-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 15.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (23.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 20 334 (քսան հազար երեք հայուր երեսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով:

«Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն ներկայացրել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից 04.06.2019թ տրված թիվ 1050 տեղեկանք այն, մասին որ Ընկերությունը 03.06.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետնանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 23.04.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ուստի նման պայմաններում «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.06.2019թ. թիվ 26/10184-2019 գրությամբ «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Գուրգեն Սողոմոնյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**